ԱՆԲԱԽՏ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐ

Մի օր Զըղջիկն ու Ճայն եկան
Թե՝ է՛կ դառնանք վաճառական։
Ասին ու խելք խելքի տըվին,
Հավան կացան, պայման դըրին.
Բայց՝ արի տես... որ փող չունեն։
Շատ միտք արին, թե ինչ անեն,
Վերջը եկան Փըշի մոտը,
Ընկան նըրա ձեռն ու ոտը,
Ու մուրհակով,
Շահով, կարգով,
Փող վեր առան բավականին,
Ինչքան պետք էր իրենց բանին։

Զիղջը մընաց, տընպահ դառավ,
Ճայը բոլոր փողերն առավ,
Առավ, նըստեց նավի միջին,
Հասավ Մըսըր, Զինումաչին,
Ֆարս, Հընդըստան,
Արաբըստան...
Է՛լ թանկագին քիրմանի շալ,
Է՛լ մարգարիտ, զըմրուխտ ու լալ,
Հընդու խուրմա, փըստա, բադամ,
Եվ... ո՛ր մեկի անունը տամ.
Ինչ որ տեսավ, աչքը սիրեց,
Առատ-առատ նավը լըցրեց.
Նավը լըցրեց հազար բարով
Ու ետ՝ եկած ճանապարհով
Ուրախ-ուրախ տուն էր գալի։
Ճամփին ծովում սարսափելի
Ալեկոծում, մըրրիկ ելավ,

30 Զարկեց, տարավ ապրանք ու նավ։
Միայն սովդաքյար* Ճայը էնօր
Ազատվեցավ մերկ ու տրկլոր։
Ազատվեցավ — փառք իր Աստուն,
Բայց ինչ սըրտով խեղճը գա տուն.
35 Գա՛ — ինչ ասի պարտքատերին,
Ո՞նց երևա իր ընկերին...
Ընկերն էնտեղ՝ դուռը կըտրած,
Աչքը ճամփին, վիզը ծըռած,
Համրում է օրն օրի վըրա,
40 Թե՝ մեր Ճայը երբ պիտի գա...
Երկար նայեց,
Ճամփեն պահեց,
Շատ լավ ու վատ երազ տեսավ,
Մինչև պարտքի օրը հասավ,
45 Ու՝ մուրհակի թուղթը ձեռին,
Փուշը տընկվեց կըտեր ծերին։
— Է՛յ, բարեկամ, ինչ բանի եք.
Էլ չեք ասում թե պարտք ունեք...
Գործ բըռնեցիք, հորս ողորմի,
50 Ետ տվեք դե փողըս հիմի։
Թուղթ եք տըվել՝ վախտ իմացեք,
Ամոթ, աբուռ, ահ ունեցեք...
Թալան հո չի՞... մեղք եմ ես էլ...
Ախպե՛ր, էսպես բա՞ն եք տեսել.
55 Ոսկի տա մարդ իրեն ձեռով,
Ջըկարենա առնի զոռով...
Սրանից հետո դե արի դու
Ու ձեռ մեկնի աղքատ մարդու...

---

*վաճառական

Գոռգոռում էր ողջ թառակում,
60 Հայհոյում էր, խայտառակում.
Ամեն մարդ էլ, ով որ լսում,
Հենց մի բերան էն էր ասում.
— Ա՛յ ամոթ ձեզ, Զըղջիկ ու Ճայ,
Ի՞նչ ենք լսում. — վա՛յ, վա՛յ, վա՛յ, վա՛յ.
65 Անուններըդ վաճառական,
Ու էս տեսակ խայտառակ բա՞ն...
Վա՛յ, վա՛յ, վա՛յ, վա՛յ,
Զըղջիկ ու Ճայ...
Զըղջիկն էսպես միշտ լըսելիս
70 Սիրտը բերնով դուրս էր գալիս։
Բարկանում էր իրեն մըտքում,
Անիծում էր, չըքում, թըքում.
— Ա՛յ քու տունը քանդվի, ա՛ Ճայ,
Ա՛յ դու դառնաս գըրողի փայ.
75 Էս ի՞նչ բան էր, որ դու արիր,
Գլուխս էս ի՞նչ փորձանք բերիր...
Ու խընդրում էր ամեն անգամ.
— Մի նեղանար, Փուշ բարեկամ,
Շատ ես կացել,
80 Կա՛ց մի քիչ էլ.
Թուղթ ըստացա երեկ Ճայից,
Թե՝ դուրս եկա Արաբիայից.
Որտեղ որ է՝ շուտով կըգա,
Դեռ մի բան էլ ավել կըտա...
85 — Ես չեմ ուզում ավելն, ախպեր,
Կանխիկ համրած իմ փողը բեր.
Շահ եք գըրել,
Վախտ եք դըրել.
Ինչ գըրած ա, էն եմ ասում,
90 Ձեզնից ավել բան չեմ ուզում։

— Չէ՛, աղա Փուշ,
Թե վաղ, թե ուշ,
Փողն իր կարգին, շահն իր կարգին,
Իսկ պատիվը դ... ես իմ հոգին...
Ես հույս ունեմ... ասենք պարտք ենք...
Բայց չէ՞ ախար մենք էլ մարդ ենք...
Չէ՛, քու արածն ով մոռանա,
Իր Աստվածն էլ նա կուրանա...

Խեղճը էսպես լեզու ածավ,
Շատ հույս տըվավ, շատ խոստացավ,
Շատ սուտ ասավ պարտքատերին,
Շատ ըսպասեց իր ընկերին.
Բայց ընկերը չըկա՛, չըկա՛։
— Էս ի՛նչ ցավ էր. Աստված վըկա.
Ի՛նչ իմ բանն էր՝ մըտա մեջը,
Որ խայտառակ լինեմ վերջը...
Ինչպես պըրծնեմ էս կըրակից,
Էս ահագին պարտքի տակից,
Էլ ինչ ասեմ,
Ո՞նց ըսպասեմ.
Նա երբ կըգա, ինչ իմանամ,
Ո՞ր ջուրն ընկնեմ... ո՞ւմ մոտ գընամ...
Շատ միտք արավ,
Դես դեն թըռավ,
Ինչ որ ուներ տանը, հագին,
Ողջ հավաքեց, տըվավ պարտքին,
Ցիփ մերկացավ։
Էլ չըպըրծավ։
Վերջը տեսավ, որ ճար չեղավ,
Թևեր առավ, ինքն էլ փախավ,
Փախավ, կորավ, որ էլ էնպես,

Դատարկ, սընանկ ու սևերես,
Ոչ պատահի պարտքատերին,
Ոչ երևա լույս աշխարհին։

Այնուհետև իր նամուսից,
Զըղջիկը՝ մերկ, փախած լուսից,
Ցերեկները դես դեն թաքչում,
Գիշերն է միշտ մըթնում թըռչում,
Որ չերևա իր թայ-թուշին*,
Ոչ պարտքատեր աղա-Փուշին։
Ճայն էլ ծովում,
Ճըչում, ծըվում,
Ջուրն է մըտնում,
Դուրս է պըրծնում,
Թևին տալիս,
Ման է գալիս,
Թե մի գուցե բախտը բանի,
Կորուստն էլ ետ ջըրից հանի։
Իսկ Փուշն, արդեն հույսը հատած,
Ճանկ ու ատամ սուր պատրաստած,
Կողքովն ով որ անց է կենում՝
Քաշում է փեշն ու հարցընում,
Թե չե՞ն տեսել մեկն ու մեկին,
Էն լիրբ Ճային կամ Զըղջիկին.
Ու էն օրից մինչև օրս էլ
Մեկը մեկին դեռ չեն տեսել։

*ընկերներ